Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
«1032-11002/2024-ԼՎ-1» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր 1) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2024-ԼՎ-1» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2024 - 31.12.2024 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2024 - 30.06.2024 |
| Ներկայացման օր | 10.07.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Հովսեփյան, ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն
6) Առաջին օգնության դեղորայքի տրամադրում
7) Մշակութային միջոցառման կազմակերպում

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

<u>Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն</u>

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է եռամսյակի ընթացում ուղեգրված թվով 2 շահառուների անհատական կարիքի գնահատում և ըստ գնահատման կազմվել է անհատական սոցիալական ծրագիր: Կատարվել է նաև ծրագրի մյուս 45 շահառուների

կարիքի վերագնահատում: Գնահատվել է անցած 6 ամիսների վիճակը և ըստ այդ գնահատումների շարունակվում են մատուցվել խնամքի ծառայությունները:
Ծրագրում ընդգրկված նոր շահառուների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր:
Եռամսյակում սոցիալական աշխատողի կողմից կատարվել են տնային այցելություններ շահառուների բնակարաններ, ծանոթացել շահառուների սոցիալ-առողջապահական ընթացիկ վիճակին: Կատարվել են 7 շահառուների ապրիլ-հունիս ամիսների փաստագրում անապահովության գնահատման համակարգում:
2 շահառուի ուղեկցվել է ՄՍԾ Վանաձորի տարածքային կենտրոն՝ կենսաթոշակը քարտային համակարգից հայփոստով ստանալու համակարգ տեղափոխելու, քանի որ շահառուներն ունեն տեղաշարժման խնդիր և չեն կարողանում կենսաթոշակը կանխիկացնել:
4 շահառուի համար սոց.աշխատողը դիմել է Վանաձորի համայնքապետարան՝ աղբի վարձավճարների հետ կապված անճշտությունը վերացնելու համար: Խնդիրը լուծվել է:
*Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*

**<u>Կենցաղային սպասարկում</u>**

Հաշվետու ամիսներին սոցիալական խնամողների կողմից կատարվել է կենցաղային սպասարկում՝ ըստ պետական չափորոշիչների՝ Ա խմբի շահառուներին կատարելով ամենօրյա այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր: Այցելությունները կատարվել են նախապես կազմված այցելությունների գրաֆիկներին համապատասխան:
Սոցիալական խնամողները մատուցել են հետևյալ ծառայությունները. Լոգանք, մարմնի ամբողջական և մասնակի խնամք, տակդիրի փոխում, անձնական հիգիենայի պահպանում, սննդի պատրաստում, կերակրում, լվացքի կազմակերպում, արդուկում, բնակարանի հարդարում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուներին ուղեկցել են նաև խանութ, փոստատուն, բանկ՝ քարտային թոշակը կանխիկացնելու համար:
Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև լվացքատունը, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հասկացվել վերջիններիս: Այն շահառուները, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները հագուստները լվացել են շահառուի բնակարանում:

**<u>Բժշկական օգնություն և սպասարկում</u>**

Ապրիլ-հունիս ամիսներին բուժքույրերը շահառուների բնակարաններ այցելությունները կատարել են ըստ նախապես կազմված այցելությունների գրաֆիկի և պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին կատարել են շաբաթական 2-ական այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 1-ական այց: Ըստ անհրաժեշտության կատարել են նաև լրացուցիչ այցելություններ: Այցելությունների ժամանակ կատարվել են արյան ճնշման, թթվածնի քանակի, շաքարի մակարդակի չափումներ, վերքերի մշակում, դեղորայքի ընդունման վերահսկում, միջմկանային, ներերակային ներարկումներ, խորհուրդներ, վերականգնողական վարժություններ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ, ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը:
Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ծառայությունների մատուցման ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում: *Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների կայուն առողջական վիճակը:*

**<u>Դեղորայքի հատկացում</u>**

Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին հատկացվել են առաջին օգնության դեղորայք, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղորայքը, որը չի տրամադրվում անվճար:

**<u>Մշակութային միջոցառման կազմակերպում</u>**

Հունիսի 13-ին ծրագրի 4 շահառուներ այցելել են Գուգարաց թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի՝ աղոթելու, մոմեր վառելու երկրի սահմանների խաղաղության և հայ զինվորի անվտանգ ծառայության համար: Մի քանի ժամ բնության գրկում անցկացնելուց, զրուցելուց, հետաքրքիր ժամանակ անցկացնելուց հետո տարեցները մեծ ոգևորությամբ վերադարձել են տուն:

Հունիսի 19-ին ծրագրի 2 շահառուներ հյուրընկալվել են Հայկական Կարիտասի «Սաբինե» փոքր խմբով տանը: Խոհարարական աշխատարանի ժամանակ տարեցներն ու երեխաները համատեղ պատրաստել են համեղ կերակրատեսակներ: Ստեղծված ընտանեկան ջերմ մթնոլորտի ներքո, միջոցառման մասնակիցները կատակել, զվարճալի պատմություններ են պատմել և ճաշակել պատրաստած կերակրատեսակները:
*Կազմակերպվող միջոցառումները նպատակ ունեն ինտեգրել միայնակ տարեցներին հասարակության մեջ:*

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շաբաթական աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Ուխտագնացություն՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02etap51Tc1u4Ptgj3rvt5vPrLTLAz9Ea4vRSoKBf9wkrsfgQwv465EXDwZVetVtrGl?rdid=cuRbtOXp09IIoOuW
Խոհարարական աշխատարան՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0bhN6JWKzw6tF8hASm5DSqq9uC3GM6ro7RnAvS5Mfo8yKnLQFvbC15ryoYZCSkf7Ll?rdid=iOqcIn1VBHQEfqft
Հոգեբանական հանդիպում ոչ ֆորմալ խնամողների հետ՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02MLkCL9L5cTwpfU4h9vnQSv6R6AQk8eowFrisS9UGHnw5aCeYm5swpaGKIqXSXkbXl?rdid=Mmmbw5siKZPEGRMo
Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

-

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն
6) Առաջին օգնության դեղորայքի տրամադրում
7) Մշակութային միջոցառման կազմակերպում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

- Ապրիլին ծրագրի բուժքույրերը և սոցիալական աշխատողը մասնակցել են Կարիտաս Ավստրիայի կողմից կազմակերպված «Հոգևոր խնամք» թեմայով օնլայն դասընթացին:
- Ապրիլին կազմակերպվել է հոգեբանական հանդիպում ծրագրի ոչ ֆորմալ խնամողների համար՝ շահառուների հարևանների, բարեկամների, հարազատների համար. նրանց համար, ովքեր իրենց անմիջական օժանդակությունն ունեն տարեցների խնամքի կազմակերպման գործում: Հոգեբանի հետ հանդիպումը մեծ հնարավորություն էր զրուցելու, կիսվելու այն խնդիրներով, որոնց երբևէ առնչվել են միայնակ տարեցներին օգնելիս:
- Մայիսին Հայկական Կարիտասում անցկացվեցին Բնապահպանակ էթիկա թեմայով դասընթացեր, որին մասնակցեցին նաև Տնային խնամք ծրագրի աշխատակիցները: Քննարկվեցին էկոլոգիական հիմնահարցեր, պլաստիկի օգտագործման նվազեցման և այլ վարքագծային փոփոխությունների անհրաժեշտություն:
- Հունիսին ծրագրի սոցիալական աշխատողն ու բուժքույրերը մասնակցնել են ֆունկցիաների միջազգային դասակարգման կիրառման վերաբերյալ իրազեկման հանդիպմանը, որը կազմակերպվել էր Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հավասարության և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի շրջանակներում:
- Հունիսին ծրագրի համակարգողն ու 1 բուժքույր մասնակցնել են Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի և Շվեյցարիայի Լյուցերնի համալսարանի համատեղ «Վերականգնողական ծառայությունների միջոցով առողջ ծերացման խթանումը Հայաստանում «Առողջապահական համակարգի ուսուցման մոտեցման» կիրառմամբ» ծրագրի շնորհանդեսին: Այն ներառում է դասընթացներ, առողջ ծերացումը խթանելու վերաբերյալ նյութերի մշակում, առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն, առողջ ծերացումը խթանելու վերաբերյալ ուսումնական նյութերի մշակում:
- Հունիսին ծրագրի բուժքույրը Հայկական Կարիտասի «Փոքրիկ Իշխան» երեխաների կենտրոնի երեխաների համար անց է կացրել «Դեռահասի անձնական հիգիենա, 1-ին օգնություն» թեմայով հանդիպում-քննարկում: Այն ուղեկցվել է հարց ու պատասխանով, գործնական աշխատանքներով:

**Շահառուներ**

| N | Անուն, ազգանուն | Բնակության հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարսենիկ Հախվերդյան | Վանաձոր,Գր.Լուսավորիչ 14/47 | 2-12-84, 098366615 | 6714400012 | |
| 2 | Էմմա Եգանյան | Վանաձոր,Նժդեհի 9/23 | 093484555 | 7410410019 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Ռիմա Մնացականյան | Վանաձոր, Զոփաջյան 20/16 | 2-82-38 | 5309410081 | |
| 4 | Ջեմմա Հովսեփյան | Վանաձոր, Զոփաջյան 6/7 | 4-70-65 | 7410340096 | |
| 5 | Ալինա Աֆրիկյան | Վանաձոր, Համբարձումյան 3/50 | 5-56-49, 093055649 | 6309460080 | |
| 6 | Վերգինե Ոսկանյան | Վանաձոր, Թումայան 11/1 | - | Հրաժարվել է | |
| 7 | Բավական Ոսկանյան | Վանաձոր, Թումայան 11/1 | - | Հրաժարվել է | |
| 8 | Ավետիկ Գրիգորյան | Վանաձոր, Շինարարների 7/9 | 4-82-07 | 6903390022 | |
| 9 | Էլիչկա Վիրաբյան | Վանաձոր, Երևանյան խճ. 147/1-42 | 3-79-06 | 5502355018 | |
| 10 | Մարգո Ամիրաղյան | Վանաձոր, Իսահակյան 19/1 | 2-84-48 | 6410340052 | |
| 11 | Վարդուշ Ունանյան | Վանաձոր, Թումանյան 9բ/16 | 2-11-45 | 7103380074 | |
| 12 | Լենա Մոսաեսյան | Վանաձոր, Ս-Պետերբուրգի 5/3-7-22 | 099 14 12 88 | 7004470091 | |
| 13 | Սիրան Մկրտչյան | Վանաձոր, Կնունյանց 15 | (099) 94-92-57 | 5505460029 | |
| 14 | Նուբար Յարայան | Վանաձոր, Իսակովի 23 | 055 22 68 84 | 1505370140 | |
| 15 | Սեդա Խաչիկյան | Վանաձոր, Գրիբոյեդովի 6/61 | 07741-68-19 | 7211470356 | |
| 16 | Ալմարա Մուսինյան | Վանաձոր, Վարդանանց 122/24 | 094915774 | 6709460274 | |
| 17 | Ռիմա Վարդանյան | Վանաձոր, Պ.Սևակի 45/49 | 2-87-72 | 5301370057 | |
| 18 | Սեդա Թորոսյան | Վանաձոր, Զ.Անդրանիկ 1 նրբ, 17 | 093653869 | 5103610406 | |
| 19 | Միշա Վարդանյան | Վանաձոր, Զ.Անդրանիկ 1 նրբ, 17 | 094629461 | 2008420238 | |
| 20 | Սոնա Բոնջուկյան | Վանաձոր, Ուսանողական 10/4 | 094525193 | 5107540236 | |
| 21 | Սիրուշ Հակոբյան | Վանաձոր, Բանյոյի 10/7 | 4-67-41 | 5214390289 | |
| 22 | Ալվարդ Սիմոնյան | Վանաձոր, Լուսավորիչ 26/10 | (091) 67-29-44 | 5807490072 | |
| 23 | Բավական Անտոնյան | Վանաձոր, Աղայան 95/16 | 2-77-23 | 6409520026 | |
| 24 | Վլադիմիր Մամոյան | Վանաձոր, Շինարարների 8/33 | (091) 62-80-11 | 1909310093 | |
| 25 | Նունիկ Մելիքսեթյան | Վանաձոր, Շինարարների 8/33 | (091) 62-80-11 | 8003350077 | |
| 26 | Դոնարա Մարգարյան | Վանաձոր, Զ.Անդրանիկի 1 նրբ, 3 | - | 7501380023 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 27 | Զինուշկա Քոթանջյան | Վանաձոր, Աբովյան 4 | - | 7104390154 | |
| 28 | Ռիմա Ղամբարյան | Վանաձոր, Աղայան 6 | 098843515 | 6109270113 | |
| 29 | Ալվարդ Սաֆարյան | Վանաձոր, Դեմիրճյան 5/18 | 077540520 | 7603480019 | |
| 30 | Էմիլյա Վեքիլյան | Վանաձոր, Դպրոցի 6 | 2-16-26, 098122107 | 5102420029 | |
| 31 | Հասմիկ Դժլյան | Վանաձոր, Իսահակյան 2-րդ նրբ. 5/10 | (077) 92-40-19 | 6404480239 | |
| 32 | Լենիկ Մելքոնյան | Վանաձոր, Մոսկովյան 54/1-21 | 095889848 | 5101421626 | |
| 33 | Ալվարդ Քառյան | Վանաձոր, Լազյան փակ 4 | 4-16-69, 094343809 | 5811480024 | |
| 34 | Հմայակ Առաքելյան | Վանաձոր, Տավրոս 6 փող, 13 տուն | 055861165 | 1103400010 | |
| 35 | Ալինա Մարկոսյան | Վանաձոր, Երև.խճուղի 72/21 | 093690680 | Հրաժարվել է | |
| 36 | Արաքսի Կասեմյան | Վանաձոր, Նաիրի 5/48 | 098062858 | 7204490010 | |
| 37 | Եպրաքսի Բալասանյան | Վանաձոր, Դեմիրճյան 3/10 | 2-44-09 | 7403400026 | |
| 38 | Էմմա Արաքայան | Վանաձոր, Աղայան 95/29 | 099177509 | 7910512835 | |
| 39 | Սուսաննա Պողոսյան | Վանաձոր, Գր.Լուսավորիչ 29/4 | 095282851 | 7806510010 | |
| 40 | Աշխեն Գրիգորյան | Վանաձոր, Երևանյան խճ. 217 | 055038094 | 6804620585 | |
| 41 | Կիմա Շամոև | Վանաձոր, Շինարարների 21/34 | 2-72-73, 094 99 72 73 | 8101370048 | |
| 42 | Անժել Ղաբուզյան | Վանաձոր, Շինարարների 8/38 | 094324338 | 5101480029 | |
| 43 | Նադյա Ադամյան | Վանաձոր, Թռատերական 2/1 | 4-58-25 | 7003370034 | |
| 44 | Մարտոն Փոզրարյան | Վանաձոր, Բուլղարական 2/163 | 094171947 | 280843007 | |
| 45 | Նինա Փոզրարյան | Վանաձոր, Բուլղարական 2/163 | 094171947 | 5107484077 | |
| 46 | Նաթելլա Սարգսյան | Վանաձոր, Ռազմողական 6/5 | 043081545 | 5504460026 | |
| 47 | Էմիլյա Աշրաֆյան | Վանաձոր, Զուխաջյան 36/7 | 033717718 | 7704520016 | |
| 48 | Նինա Հովհաննիսյան | Վանաձոր, Թումանյան 7/43 | 2-54-85 | Հրաժարվել է | Մայիսին տեղափոխվել է հարազատի տուն |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ------------------------------------------ | ------------------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Ձևաչափ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 46//47 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 42 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 1.4 | այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք | 0 |
| 1.4.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ), *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա -4 (4 կին)<br>Բ - 43 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 47 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 47 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 47 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 7 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 9 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>• *լվացքատան ծառայություն* | 13 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

« 9 » հուլիսի 2024 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Ապրիլ-հունիս 2024

# Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամք ծրագիր

## {ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ} պատմություններ

### Մենք Վանաձորում ոչ մի ծանոթ, բարեկամ չունենք …

76-ամյա Գայա Ղազարյանն ու 51-ամյա Իրա Սահակյանը մայր և դուստր են, 2023թ.-ի սեպտեմբերին բռնի տեղահանվել են Արցախից և առ այսօր ապրում են Վանաձորում: 7 ամիս անվարձահատույց իր բնակարանի 1 սենյակը մորն ու դստերը հատկացրել էր մի բարի վանաձորցի: Մայիս ամսից Գայա տատիկն ու Իրան ապրում են իրենց վարձակալած բնակարանում: Քանի որ երկուսն էլ ունեն հաշմանդամության խումբ (մայրը 2-րդ, իսկ աղջիկը՝ 1-ին), ինքնուրույն անկարող էին լուծել իրենց սոցիալական, կենցաղային կարիքները: Ընդգրկելով Տնային խնամք ծրագրում՝ ծրագրի բազմամասնագիտական թիմը ձեռնամուխ եղավ նրանց խնդիրների լուծմանը: Քանի որ երկուսն էլ որպես հաշմանդամություն ունեցող անձ փաստացի ներառված չէին Հայաստանի Հանրապետության տվյալների բազայում, սոցիալական աշխատողը և բուժքույրը կազմեցին փաստաթղթերի փաթեթը: Նախ նրանց հաշվառեցին Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկայում, ապա համապատասխան փաստաթղթերը ներկայացրեցին գնահատման հանձնաժողովին և Գայա տատիկն ու Իրան ստացան անձի ֆունկցիոնալության գնահատման աստիճան և սահմանափակման միավոր: Իրա Սահակյանը ստացավ նաև լոգանքի աթոռ, առանց որի դժվարանում էր լողանալ: Փաստացի բնակության հասցեում գրանցումը ևս կազմակերպվեց ծրագրի կողմից: Մայր և դուստր հաշվառվեցին նաև անապահովության գնահատման համակարգում և ներկայում նաև ստանում են պետության կողմից հատկացվող անապահովության սոցիալակա վճար:



Մայր և դուստր ծրագրի մշտական հոգածության ներքո են: Սոցիալական խնամողն օգնում է կենցաղային գործերում՝ բնակարանի հարդարում, գնումներ, անձնական հիգիենայի պահպանում, իսկ բուժքույրը հետևում է նրանց առողջական վիճակին: *«Եթե չլինեինք այս ծրագրում, մենք ինքնուրույն ոչինչ անել չէինք կարող: Ես ընդհանրապես տնից չեմ կարողանում դուրս գալ, իսկ մայրս հազվադեպ է դուրս գալիս, քանի որ դժվարանում է քայլել, հաճախակի վայր է ընկնում: Մենք Վանաձորում ոչ մի ծանոթ, բարեկամ չունենք, քաղաքին անծանոթ ենք, դա ևս մեծ խնդիր է: Սոցիալական խնամողի օգնությամբ կարծես կապ է հաստատվել դրսի աշխարհի հետ: Բոլոր գնումները, վճարումներն ինքն է կատարում: Շատ հոգատար է, ամեն օր այցելում է, օգնում մեզ»,-* հուզված պատմում է Իրա Սահակյանը:

## Շնորիկ Շահինյանի պատմությունը



Շնորիկ Շահինյանը ծնվել է 1946 թվականին Ախուրյան համայնքի Կամո գյուղում: Սովորել է ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետում: Ավարտելով կրթությունը՝ սկսել է աշխատել իր մասնագիտությամբ՝ Երևանում, այնուհետև շուրջ 10 տարի դասավանդել է Գյումրու Գեղարվեստի քոլեջում:

Շնորիկ Շահինյանը տարիքային թոշակառու է, բնակվում է միայնակ: Որդին իր ընտանիքի և չորս անչափահաս երեխաների հետ ապրում է առանձին: Նա ունի հաշմանդամություն և երեխաներից մեկը նույնպես մանկուց հաշմանդամ է: Շնորիկը ունի բազում առողջական խնդիրներ՝ հոդացավեր ծնկի շրջանում, մեջքի ցավեր, աչքերի տեսողությունը թույլ է (կատարակտ), դժվարանում է քայլել, տանից դուրս գալ և հոգալ իր ամենօրյա խնդիրները:

«Նախքան «Հայկական Կարիտաս»-ի տնային խնամք ծրագրի մեջ ընդգրկվելը ապրում էի անհույս, ընկճված, ինձ զգում էի հուսալքված: Հիմա իմ կյանքում շատ դրական փոփոխություններ են տեղի ունեցել, հիմա ապրում եմ վստահ, հույսով լի, որ այլևս մենակ չեմ, մշտապես անհամբեր սպասում եմ Կարիտասի աշխատակիցներին: Ամենահաճելին թերևս տարաբնույթ միջոցառումներն են, որոնց հնարավորություն ունեմ մասնակցելու ծրագրի շրջանակներում»,-մեծ ոգևորությամբ պատմում է տիկին Շնորիկը:

**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**/ՏԱՐԵՑՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ/ 2024Թ. 2-րդ ԵՌԱՄՅԱԿ**

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Պլան | ՓԱՍՏ | | | ՓԱՍՏ Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | |
| | ***Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ (11002)*** | | | | | |
| | **«Հայկական Կարիտաս» ԲՀԿ (ՀՀ քաղ+ԼՂ)** | 150 | 145 | 147 | 147 | 147 |
| | *Այդ թվում՝ կին* | | 121 | 123 | 123 | 123 |
| | *տղամարդ* | | 24 | 24 | 24 | 24 |
| | *Այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող* | | 59 | 60 | 60 | 60 |
| | **«Հայկական Կարիտաս» ԲՀԿ (ՀՀ քաղ)** | | 144 | 145 | 145 | 145 |
| | *Այդ թվում՝ կին* | | 120 | 121 | 121 | 121 |
| | *տղամարդ* | | 24 | 24 | 24 | 24 |
| | *Այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող* | | 58 | 58 | 59 | 59 |
| | **«Հայկական Կարիտաս» ԲՀԿ (ԼՂ քաղ)** | | 1 | 2 | 2 | 2 |
| | *Այդ թվում՝ կին* | | 1 | 2 | 2 | 2 |
| | *տղամարդ* | | 0 | 0 | 0 | 0 |
| | *Այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող* | | 1 | 2 | 2 | 2 |
| | Շահառուների թիվ, որոնք կարիք ունեն կողմնակի անձի մշտական խնամքի ("Ա" խումբ), մարդ | | 15 | 15 | 15 | 15 |
| | կին | | 11 | 12 | 12 | 12 |
| | տղամարդ | | 4 | 3 | 3 | 3 |
| | Շահառուների թիվ, որոնք կարիք ունեն կողմնակի անձի պարբերական խնամքի ("Բ" խումբ), մարդ | | 130 | 132 | 132 | 132 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կին | | 110 | 111 | 111 | 111 |
| | տղամարդ | | 20 | 21 | 21 | 21 |
| | Շահառուների թիվ, որոնք կարիք ունեն կողմնակի անձի մշտական խնամքի ("Ա" խումբ), մարդ | | | | | |
| | կին | | | | | |
| | տղամարդ | | | | | |
| | *Մրցութային դրամաշնորհի ճանապարհով հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող ցերեկային խնամքի ծառայություն ստացող տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող շահառուներ* | | | | | |
| | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ – ՑԿ (ՀՀ քաղ+ԼՂ)* | | | | | |
| | *կին* | | | | | |
| | *տղամարդ* | | | | | |
| | *Այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող* | | | | | |
| | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ – ՑԿ (ՀՀ քաղ)* | | | | | |
| | *կին* | | | | | |
| | *տղամարդ* | | | | | |
| | *Այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող* | | | | | |
| | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ – ՑԿ (ԼՂ քաղ)* | | | | | |
| | *կին* | | | | | |
| | *տղամարդ* | | | | | |
| | *Այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող* | | | | | |

Հարգելի գործընկերներ, խնդրում եմ լրացնել միայն փաստ՝ Ընդհանուրի տակ, ըստ ամիսների լրացնելու կարիք չկա: